

Այսպես է վերնագրել իր հերթական գիրքը Սիլվա Սուքիասյանը: Գրքում հեղինակը նկարիչ Արամ Իսաբեկյանի մասին գրում է. «Արամը նկարում է վրձնով, աղոթքով, խնկի բույրով և սրտով»: Ես այս տողերն ուզում եմ ուղղել հենց Սիլվային, քանի որ նա Արամ Իսաբեկյանի մասին գրել է աղոթքով, խնկի բույրով և մաքրամաքուր գրչով: Այս գիրքը «լուսի մի ծփանք» է, լուսի մի շեղջ, որ այս օրերին այնքան անհրաժեշտ է մեր ժողովրդին:

Սիլվան մեր ժամանակի քառսում, վայրէջքներով-վերելքներով հագեցած ժամանակի մեջ և ժամանակի ֆոնի վրա մեծ վարպետությամբ, բազմազան գծերով արտացոլել է Արամ Իսաբեկյան մարդ-նկարչի, քաղաքացու, հայի կերպարը: Եվ առանց նրա կտավներին ծանոթանալու, ասես, արդեն տեսնում ես մեծարժեք այդ ստեղծագործությունները, ապրում դրանք զգալու գերագույն վայելքը, ստեղծագործություններ, որ քայլելու են ժամանակի միջով, ժամանակներ են գնալու և աշխարհի տարբեր ծագերում ապրող հայերի համար ներշնչանքի աղբյուր են դառնալու:

Սիլվայի խորաթափանց մտքի և վարպետ գրչի շնորհիվ Արամ Իսաբեկյանը երևում է այնպես, ինչպես կա: Նկարչությունը նրա համար ավիշ է, արյուն, լինելություն, և այդ լինելությունը ոչ թե սոսկ սեփական անձի, այլ հայ ազգի լինելության դողանջն է:

Ս.Սուքիասյանը բառի արժեքն իմացող լրագող է, խոսքերը հենց այնպես շռայլորեն չի օգտագործում, և նա Իսաբեկյանին համարում է մեծ նկարիչ և մեծագույն արվեստագետ: Նա մեծ սիրով ու մեծագույն պատասխանատվությամբ իր ազգի շնորհալիներին է ներկայացնում՝ հիմնականում հոգևոր թեմաներով ստեղծագործող և հոգևոր կյանքն և այդ ոլորտի մարդկանց: Սակայն այս գրքով նա իր ընթերցողին հետաքրքիր անակնկալ մատուցեց՝ իր գրիչը վարպետորեն օգտագործելով նաև արվեստագետի մասին խոսելիս: Նա նուրբ զգացողությամբ, քայլ առ քայլ ներկայացնում է նկարչին: Եվ թվում է, թե Արամ Իսաբեկյանը նկարների, գույների լեզվով քեզ հետ է խոսում, նրա հերոսը դու ես, քո ծանոթը, քո երեխան, քո սերը:

Սիլվան ընթերցողին չի համոզում, որ նա սիրի Իսաբեկյանի գույները, այլ ոգու ներքին մղումով ձգվում էս դեպի նրա կտավները: Դա այդպես է, որովհետև նա հմտորեն է ներկայացնում Իսաբեկյանի արվեստի անձայրածիր խորքը, որի մեջ ամփոփված է հայ ազգի խտացրած ուժը և իմաստությունը: Սիլվան Իսաբեկյանի կտավները գնահատում է ոչ թե ազգային ընթացիկ պահանջների, այլ արվեստի համընդհանուր կոչման տեսանկյունից՝ մեծ արվեստի չափանիշներով: Հեղինակը նաև արվեստագետ է, հոգով, էությամբ և այս գրքով կոչ է անում զինվել լավատեսությամբ, որի հիմնական աղբյուրը, նրա պատկերացմամբ, արվեստն է՝ ամենամնայուն, ամենահզոր ուժը աշխարհի: Եվ

Ժամանակը, ժողովուրդները շաղկապողը արվեստն է, ուր իր ուրույն տեղն ունի Արամ
Բաբեկյան նկարիչը:

Ալվարո Պետրոսյան